Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY

# ԲԱՆԲԵՐ
# Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
# ВЕСТНИК
# ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
# BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY

---

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

## PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (63)

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2023

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.

Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

**Խմբագրական խորհուրդ՝**

***Գյուրջինյան Դավիթ*** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ *(գլխավոր խմբագիր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Եղիազարյան Գայանե*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(գլխավոր խմբագրի տեղակալ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Խաչիկյան Անահիդա*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Աբրահամյան Կարինե*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Գասպարյան Գայանե*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Համբարձումյան Դիանա*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Աբրահամյան Սուրեն*** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Էթարյան Ելենա*** բանասիրական գիտությունների դոկտոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Սարգսյան Իննա*** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)*

***Թոփուզյան Աիդա*** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան)*

| | |
|---|---|
| ***Խաչատրյան Լալիկ*** | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան)* |
| ***Խաչատրյան Կարեն*** | պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ)* |
| ***Մկրտչյան Թաթուլ*** | տնտեսագիտության դոկտոր *(Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)* |
| ***Օրդուխանյան Էմիլ*** | քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ *(ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)* |
| ***Սարվազյան Լիլիթ*** | փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ *(ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)* |
| ***Պախսարյան Նատալյա*** | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ)* |
| ***Սերեբրյակովա Սվետլանա*** | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *(Հյուսիս-Կովկասյան Ֆեդերատիվ Համալսարան, Ռուսաստանի թարգմանիչների միության Ստավրոպոլյան մարզային բաժանմունք, ՌԴ)* |
| ***Գլոտովա Ժաննա*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ *(Էմանուել Կանտի անվան Կրթության և հումանիտար գիտությունների ինստիտուտ, Կալինինգրադ, ՌԴ)* |
| ***Շահվերդյան Անուշ*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ *(Համաշխարհային բանկի Կրթության գծով միջազգային խորհրդատու, Վաշինգտոն, ԱՄՆ)* |

**Խմբագրական կազմ՝**

| | |
|---|---|
| ***Պետրոսյան Հայկ*** | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր |
| ***Կարապետյան Իգոր*** | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր |
| ***Միլիտոսյան Լուիզա*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Ասատրյան Սուսաննա*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Ավանեսով Էռնեստ*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Սամուելյան Սվետլանա*** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Հակոբջանյան Հրաչիկ*** | բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Ալեքսանյան Գոռ*** | աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| ***Ճահինյան Անի*** | մանկավարժական գիտությունների թեկնածու |
| ***Գալստյան Ամալյա*** | տնտեսագիտության թեկնածու |
| ***Ակոպյան Յոլակ*** | քաղաքական գիտությունների թեկնածու |
| ***Մադոյան Հակոբ*** | փիլիսոփայական գիտությունների թեկնածու |

**Տեխնիկական խմբագիր՝**

***Փիլավչյան Համիկ***

**Редакционный совет:**

| | |
|---|---|
| ***Гюрджинян Давид*** | кандидат филологических наук, доцент *(гл. редактор, Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Егиазарян Гаяне*** | доктор филологических наук, профессор *(зам. гл. редактора, Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Хачикян Анаида*** | доктор филологических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Абраамян Карине*** | доктор филологических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |

| | |
|---|---|
| ***Гаспарян Гаяне*** | доктор филологических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Амбардзумян Диана*** | доктор филологических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Абраамян Сурен*** | доктор филологических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Этарян Елена*** | доктор филологических наук *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Саркисян Инна*** | доктор педагогических наук, профессор *(Государственный университет имени В. Брюсова)* |
| ***Топузян Аида*** | доктор педагогических наук, профессор *(Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)* |
| ***Хачатрян Лалик*** | доктор филологических наук, профессор *(Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)* |
| ***Хачатрян Карен*** | доктор исторических наук, профессор *(Ереванский государственный университет, факультет истории)* |
| ***Мкртчян Татул*** | доктор экономических наук *(Государственный экономический университет Армении)* |
| ***Ордуханян Эмиль*** | кандидат политических наук, доцент (*Институт философии, социологии и права* (НАН РА) |
| ***Сарвазян Лилит*** | кандидат философских наук, доцент (*Институт философии, социологии и права* (НАН РА) |
| ***Пахсарян Наталья*** | доктор филологических наук, профессор *(Московский государственный университет, РФ)* |

| | |
|---|---|
| ***Серебрякова Светлана*** | доктор филологических наук, профессор *(Северо-Кавказский федеральный университет, Ставропольское краевое отделение Союза переводчиков России, РФ)* |
| ***Глотова Жанна*** | кандидат педагогических наук, доцент *(Балтийский федеральный университет имени Иммануила Канта, Калининград, РФ)* |
| ***Шахвердян Ануш*** | кандидат педагогических наук, доцент *(Международный консультант Всемирного банка по образованию, Вашингтон, США)* |

**Редакционная коллегия:**

| | |
|---|---|
| ***Петросян Гайк*** | доктор педагогических наук, профессор |
| ***Карапетян Игорь*** | доктор педагогических наук, профессор |
| ***Милитосян Луиза*** | кандидат педагогических наук, доцент |
| ***Асатрян Сусанна*** | кандидат педагогических наук, доцент |
| ***Аванесов Эрнест*** | кандидат педагогических наук, доцент |
| ***Самуелян Светлана*** | кандидат педагогических наук, доцент |
| ***Акобджанян Грачик*** | кандидат филологических наук, доцент |
| ***Алексанян Гор*** | кандидат географических наук |
| ***Шагинян Ани*** | кандидат педагогических наук |
| ***Галстян Амалия*** | кандидат экономических наук |
| ***Акопян Цолак*** | кандидат политических наук |
| ***Мадоян Акоб*** | кандидат философских наук |

**Технический редактор:**

***Пилавджян Асмик***

**Editorial Council:**

| | |
|---|---|
| ***Gyurjinyan Davit*** | Candidate of Sciences (Philology), Associate Professor *(Brusov State University)* |
| ***Yeghiazaryan Gayane*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |
| ***Khachikyan Anaida*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |

| | |
|---|---|
| ***Abrahamyan Karine*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |
| ***Gasparyan Gayane*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |
| ***Hambardzumyan Diana*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |
| ***Abrahamyan Suren*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Brusov State University)* |
| ***Etaryan Yelena*** | Doctor of Sciences (Philology), *(Brusov State University)* |
| ***Sargsyan Inna*** | Doctor of Sciences (Pedagogy), Professor *(Brusov State University)* |
| ***Topuzyan Aida*** | Doctor of Sciences (Pedagogy), Professor *(Armenian State Pedagogical University after Kh. Abovyan)* |
| ***Khachatryan Lalik*** | Doctor of Sciences (Pedagogy), Professor *(Armenian State Pedagogical University after Kh. Abovyan)* |
| ***Khachatryan Karen*** | Doctor of Sciences (History), Professor *(Yerevan State University, Faculty of History)* |
| ***Mkrtchyan Tatul*** | Doctor of Sciences (Economics) *(Armenian State University of Economics)* |
| ***Ordukhanyan Emil*** | Candidate of Sciences (Political Sciences), Associate Professor *Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)* |
| ***Sarvazyan Lilit*** | *Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)* |
| ***Pakhsaryan Natalya*** | Doctor of Sciences (Philology), Professor *(Moscow State University, RF)* |
| ***Serebryakova Svetlana*** | Doctor of Sciences (Philology), Professor *(North-Caucasian Federal University, Stavropol Regional Department of the Russian Translator's Union, RF)* |
| ***Glotova Zhanna*** | Candidate of Sciences (Philology), Associate Professor *(Immanuel Kant Baltic Federal University, Kaliningrad, RF)* |
| ***Shahverdyan Anush*** | Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor *(World Bank International Consultant on Education, Washington, USA)* |

**Editorial Board:**

| | |
|---|---|
| ***Petrosyan Hayk*** | Doctor of Sciences (Pedagogy), Professor |
| ***Karapetyan Igor*** | Doctor of Sciences (Pedagogy), Professor |
| ***Militosyan Luiza*** | Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor |
| ***Asatryan Susanna*** | Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor |
| ***Avanesov Ernest*** | Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor |
| ***Samuelyan Svetlana*** | Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor |
| ***Hakobjanyan Hrachik*** | Candidate of Sciences (Philology), Associate Professor |
| ***Shahinyan Ani*** | Candidate of Sciences (Pedagogy) |
| ***Galstyan Amalya*** | Candidate of Sciences (Economics) |
| ***Aleksanyan Gor*** | Candidate of Sciences (Geography), Associate Professor |
| ***Akopyan Tsolak*** | Candidate of Sciences (Politology) |
| ***Madoyan Hakob*** | Candidate of Sciences (Philosophy) |

**Technical Editor:**

***Pilavjyan Hasmik***

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 2(63)։ - Երևան, Լինգվա, 2023, 310 էջ։
Вестник Государственного университета имени В. Брюсова 2(63). - Ереван, Лингва, 2023, 310 с.
Bulletin of Brusov State University 2(63). - Yerevan, Lingva, 2023, 310 pages.

**ISSN 1829-3107**
**© Լինգվա, 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ
# CONTENTS


| | | |
|---|---|---|
| *ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ*<br>*ПЕДАГОГИКА*<br>*PEDAGOGY* | | |
| ԼԻԼԻԹ ԱՆՏՈՆՅԱՆ | ՏՀՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | 19 |
| ЛИЛИТ АНТОНЯН | ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ ИКТ | |
| LILIT ANTONYAN | PEDAGOGICAL CONDITIONS FOR THE USE OF ICT | |
| | | |
| ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ<br>ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ<br>ՆԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ | ԷԹՆՈԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ | 30 |
| СМБАТ ДАВТЯН<br>МЕРИ ВАРДАНЯН<br>НАРИНЕ СИМОНЯН | ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ЭТНОБОТАНИЧЕСКИХ ТУРОВ ДЛЯ ПОВЫШЕНИЯ КОМПЕТЕНТНОСТИ СПЕЦИАЛИСТОВ ТУРИЗМА | |
| SMBAT DAVTYAN<br>MARY VARDANYAN<br>NARINE SIMONYAN | PECULIARITIES OF ORGANIZING ETHNOBOTANICAL TOURS TO INCREASE THE COMPETENCE OF TOURISM SPECIALISTS | |
| | | |
| ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ<br>ԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ<br>ՆՈՒՆԵ ԴԱՎԹՅԱՆ | ՀԵՆԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ (ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ) ԳՈՐԾԻՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ | 43 |

| | | |
|---|---|---|
| КАРИНЕ АРУТЮНЯН<br>АНИ ОГАНЕСЯН<br>НУНЭ ДАВТЯН | ВОЗМОЖНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ БЕНЧМАРКИНГА ДЛЯ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ ПРОГРАММ ОБРАЗОВАНИЯ | |
| KARINE HARUTYUNYAN<br>ANI HOVHANNISYAN<br>NUNE DAVTYAN | POSSIBILITY OF USING BENCHMARING FOR THE IMPROVEMENT OF THE PROFESSIONAL EDUCATION PROGRAMS | |
| | | |
| ՆԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ | ՈՒՍՈՒՑՉԻ ՌԵՖԼԵՔՍԻՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ | 56 |
| НАРИНЕ МАТИНЯН | ТЕХНОЛОГИИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ РЕФЛЕКСИВНОЙ КОМПЕТЕНЦИИ УЧИТЕЛЯ | |
| NARINE MATINYAN | TECHNOLOGIES OF FORMING AND DEVELOPING THE REFLEXIVE COMPETENCE OF THE TEACHER | |
| | | |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ | ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ | 70 |
| РУЗАННА МИНАСЯН | РОЛЬ МОДУЛЬНОГО ОБУЧЕНИЯ В ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ: ПРЕИМУЩЕСТВА И ВЫЗОВЫ | |
| RUZANNA MINASYAN | THE ROLE OF MODULAR INSTRUCTION IN HIGHER EDUCATION: BENEFITS AND CHALLENGES | |
| | | |
| ԱՐՄԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | ՖԻՏՆԵՍԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ | 84 |

| | | |
|---|---|---|
| АРМИНЕ НИКОГОСЯН | ОСОБЕННОСТИ ЗАНЯТИЙ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРОЙ ПО НАПРАВЛЕНИЮ ФИТНЕС В ВУЗАХ | |
| ARMINE NIKOGHOSYAN | CHARACTERISTICS OF PHYSICAL CULTURE CLASSES OF FITNESS DIRECTION IN UNIVERSITIES | |
| | | |
| ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂԻԿՅԱՆ | ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ | 91 |
| ТАТЕВИК СОГИКЯН | КРАТКОЕ ИССЛЕДОВАНИЕ ВОЗМОЖНОСТЕЙ ПРИМЕНЕНИЯ МОДЕЛЕЙ КОМПЕТЕНЦИЙ В ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ | |
| TATEVIK SOGHIKYAN | BRIEF ANALYSIS OF THE POTENTIAL USE OF COMPETENCY MODELS IN HIGHER EDUCATION | |
| | | |
| *ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ*<br>*МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ*<br>*TEACHING METHODOLOGY* | | |
| ԷՎԵԼԻՆԱ ԱԴԱՄՅԱՆ | ԱԵՐՈԲԻԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ | 101 |
| ЭВЕЛИНА АДАМЯН | АЭРОБИКА В СИСТЕМЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ МОЛОДЫХ СТУДЕНТОВ | |
| EVELINA ADAMYAN | AEROBICS IN THE SYSTEM OF PHYSICAL EDUCATION OF YOUTH STUDENTS | |
| | | |

| | | |
|---|---|---|
| ԹԱԳՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆ | ՌՈՒՍԵՐԵՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱԳԱ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ | 110 |
| ТАКУИ АСАТРЯН | К ПРОБЛЕМЕ РАЗВИТИЯ МОТИВАЦИОННОЙ СФЕРЫ БУДУЩЕГО МЕДИКА ПРИ ОБУЧЕНИИ РУССКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ | |
| TAGUI ASATRYAN | TO THE PROBLEM OF DEVELOPING THE MOTIVATIONAL SPHERE OF A FUTURE PHYSICIAN WHEN TEACHING RUSSIAN AS A FOREIGN LANGUAGE | |
| | | |
| ՍՈՒՍԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ<br>ԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ | ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ | 123 |
| СУСАННА АСАТРЯН<br>АННА ГАБРИЕЛЯН | ФОРМИРОВАНИЕ ОТНОШЕНИЯ К ДЕМОКРАТИЧЕСКИМ ЦЕННОСТЯМ В ПРОЦЕССЕ КОММУНИКАТИВНОГО ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ | |
| SUSANNA ASATRYAN<br>ANNA GABRIELYAN | FORMATION OF ATTITUDES TO DEMOCRATIC VALUES IN THE PROCESS OF COMMUNICATIVE ENGLISH LANGUAGE TEACHING | |
| | | |
| ԷԼԼԱ ԱՎԱԳՅԱՆ | ԲԱՅԻ ԱՐԺՈՒԹԱՅՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ | 136 |

| | | |
|---|---|---|
| ЭЛЛА АВАГЯН | СЛОЖНОСТИ ИЗУЧЕНИЯ ВАЛЕНТНОСТИ ГЛАГОЛА ПРИ ОБУЧЕНИИ НЕМЕЦКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ | |
| ELLA AVAGYAN | DIFFIUILTIES OF STUDYING VERBAL VALENCY WHILE TEACHING GERMAN AS A FOREIGN LANGUAGE | |
| | | |
| ԱՆԱՀԻՏ ԱՐՇԱԿՅԱՆ<br>ԷԼԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ | ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՔԱՅԼԵՐԸ | 148 |
| АНАИТ АРШАКЯН<br>ЭЛЕН ОГАНДЖАНЯН | О НЕОБХОДИМОСТИ РАЗВИТИЯ КОМПЕТЕНЦИИ АУДИРОВАНИЯ В СИСТЕМЕ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ И МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ И ПУТИ ЕГО РЕАЛИЗАЦИИ С ПОМОЩЬЮ АКТИВНЫХ МЕТОДОВ ОБУЧЕНИЯ | |
| ANAHIT ARSHAKYAN<br>ELEN OHANJANYAN | THE IMPORTANCE OF DEVELOPING LISTENING COMPETENCE IN COMPREHENSIVE EDUCATION SYSTEM AND THE METHODOLOGICAL APPROACHES AND STEPS OF ITS IMPLEMENTATION THROUGH ACTIVE TEACHING | |
| | | |
| ԵԼԵՆԱ ԲԱՅՏԱԼՅԱՆ | ԽԱՂԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ XXI ԴԱՐԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ | 165 |
| ЕЛЕНА БАЙТАЛЯН | ГЕЙМИФИКАЦИЯ КАК РЕАЛЬНОСТЬ XXI ВЕКА | |
| YELENA BAYTALYAN | GAMIFICATION AS 21st CENTURY REALITY | |

| | | |
|---|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԲԻՇԱՐՅԱՆ | «ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՕՐԱԳԻՐ» ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ | 172 |
| АСМИК БИШАРЯН | СПОСОБЫ ПРЕОДОЛЕНИЯ ЛЕКСИЧЕСКОЙ ИНТЕРФЕРЕНЦИИ МЕТОДОМ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ | |
| HASMIK BISHARYAN | METHODS OF OVERCOMING LEXICAL INTERFERENCE THROUGH PROJECT-BASED LEARNING | |
| | | |
| ԱՆՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ | ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԵՐԸ ԿԵՑՎԱԾՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ | 183 |
| АННА ДАРБИНЯН | РОЛЬ ЛЕЧЕБНОЙ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ ПРИ НАРУШЕНИЯХ ОСАНКИ | |
| ANNA DARBINYAN | THE ROLE OF THERAPEUTIC PHYSICAL EDUCATION IN CASE OF POSTURE DEVIATIONS | |
| | | |
| ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ | ՄԵԹՈԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂ- ԹՅՈՒԹՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՆՈՐ ՏԻՊԻ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ | 191 |
| ГАЯНЕ ЕГИАЗАРЯН КРИСТИНА МУРАДЯН | СОТРУДНИЧЕСТВО МЕТОДИСТОВ С РОДИТЕЛЯМИ-ТЬЮТОРАМИ В РАКУРСЕ ПОСТРОЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНОГО ПРОСТРАНСТВА НОВОГО ТИПА | |
| GAYANE EGHIAZARYAN CHRISTINA MURADYAN | COOPERATION OF METHODISTS WITH PARENT-TUTORS IN THE PERSPECTIVE OF BUILDING A NEW TYPE OF EDUCATIONAL SPACE | |

| | | |
|---|---|---|
| ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ | ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԼԵԶՎԻ ԵՐԿՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓՈՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ) | 199 |
| ЕЛЕНА ЭТАРЯН | МЕТОДЫ ПРЕПОДАВАНИЯ ЛИТЕРАТУРЫ СТРАНЫ ИЗУЧАЕМОГО ЯЗЫКА (НА ОПЫТЕ ГУ ИМ. В. БРЮСОВА) | |
| YELENA ETARYAN | METHODS USED IN TEACHING THE LITERATURE OF THE COUNTRY WHOSE LANGUAGE IS STUDIED (ON THE EXPERIENCE OF V. BRYUSOV STATE UNIVERSITY) | |
| | | |
| ԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆ | ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ | 211 |
| АНИ ШАГИНЯН | МЕТОДИЧЕСКИЕ УКАЗАНИЯ ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА ПОДГОТОВКИ ПРЕПОДАВАТЕЛЕЙ В ВУЗАХ | |
| ANI SHAHINYAN | METHODICAL GUIDELINES FOR QUALITY ASSURANCE OF TEACHER TRAINING AT HIGHER EDUCATION INSTITUTIONS | |
| | | |
| ԱԼԼԱ ՌՈՒԴԵՆԿՈ | ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՈՐՈՇ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ | 226 |

| | | |
|---|---|---|
| АЛЛА РУДЕНКО | О НЕКОТОРЫХ ЯЗЫКОВЫХ ОСОБЕННОСТЯХ ЮРИДИЧЕСКОГО ДИСКУРСА В СВЕТЕ ЗАДАЧИ ФОРМИРОВАНИЯ ДИСКУРСИВНОЙ КОМПЕТЕНЦИИ БУДУЩИХ ЮРИСТОВ | |
| ALLA RUDENKO | ON SOME LINGUISTIC FEATURES OF LEGAL DISCOURSE IN THE LIGHT OF THE TASK OF FORMING THE DISCURSIVE COMPETENCE OF FUTURE LAWYERS | |
| | | |
| ԻՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ<br>ՆԻՆԱ ՏԱՏԿԱԼՈ | ՄԵՆԹՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ | 240 |
| ИННА САРКИСЯН<br>НИНА ТАТКАЛО | МЕНТОРСТВО В СИСТЕМЕ ВЫСШЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ЯЗЫКОВОГО ОБРАЗОВАНИЯ | |
| INNA SARGSYAN<br>NINA TATKALO | MENTORING IN THE SYSTEM OF HIGHER PROFESSIONAL LANGUAGE EDUCATION | |
| | | |
| ՄԱՐԻՆԵ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ | ԲՆԱԳԻՐ ԼԵԶՎԱՆՅՈՒԹԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ | 248 |
| МАРИНЕ ПИЛИПОСЯН | ПРИМЕНЕНИЕ АУТЕНТИЧНОГО ЯЗЫКОВОГО МАТЕРИАЛА В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ПОЛИТИЧЕСКОМУ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ | |
| MARINE PILIPOSYAN | APPLICATION OF AUTHENTIC LANGUAGE MATERIAL IN THE PROCESS OF TEACHING POLITICAL ENGLISH | |

| | | |
|---|---|---|
| ***ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ***<br>***ПСИХОЛОГИЯ***<br>***PSYCHOLOGY*** | | |
| **ՍԵԴԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ** | **ԴԵԼԻՆԿՎԵՆՏ ԵՎ ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **261** |
| **СЕДА АРАКЕЛЯН** | **СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОДРОСТКОВ С ДЕЛИНКВЕНТНЫМ И АДДИКТИВНЫМ ПОВЕДЕНИЕМ** | |
| **SEDA ARAKELYAN** | **SOCIAL-PSYCHOLOGICAL PECULIARITIES OF ADOLESCENTS WITH DELINQUENT AND ADDICTIVE BEHAVIOR** | |
| ***ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ***<br>***ФИЛОСОФИЯ***<br>***PHILOSOPHY*** | | |
| **ԴԱՎԻԹ ՄՈՍԻՆՅԱՆ** | **ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ** | **276** |
| **ДАВИД МОСИНЯН** | **ДИСЦИПЛИНАРНЫЕ И ЛИТЕРАТУРНЫЕ ВОЗМОЖНОСТИ ИСТОРИЗАЦИИ ДИАСПОРЫ** | |
| **DAVIT MOSINYAN** | **DISCIPLINARY AND LITERARY POSSIBILITIES OF HISTORIFICATION OF THE DIASPORA** | |

| | | |
|---|---|---|
| *ԿԱՌԱՎԱՐՈՒՄ*<br>*МЕНЕДЖМЕНТ*<br>*MANAGEMENT* | | |
| ԳՈՌ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ<br>ԱՐՓԻՆԵ ԴԱՐԲԻՆՅԱՆ | ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ | 287 |
| ГОР АЛЕКСАНЯН<br>АРПИНЕ ДАРБИНЯН | ОСНОВНЫЕ ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ ГОРОДОМ В КОНТЕКСТЕ КОНЦЕПЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ | |
| GOR ALEKSANYAN<br>ARPINE DARBINYAN | MAIN ISSUES OF CITY MANAGEMENT IN THE CONTEXT OF THE CONCEPT OF SUSTAINABLE DEVELOPMENT | |
| | | |
| *ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ*<br>*СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ*<br>*INFORMATION ABOUT THE AUTHORS* | | 301 |

ՀՏԴ 37.016:811
DOI: 10.51307/18293107201523326O-23.63-172

# «ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՕՐԱԳԻՐ» ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

## ՀԱՍՄԻԿ ԲԻՇԱՐՅԱՆ

***Համառոտագիր***

Նախագծային ուսուցման մեթոդը վերջին 10-ամյակի ընթացքում մեծ տարածում է ստացել ամբողջ աշխարհով մեկ և դարձել է մի շարք ուսումնասիրությունների առարկա: Սույն հոդվածը նվիրված է փոխներթափանցող բառային միավորների հաղթահարմանը նախագծային մեթոդի, մասնավորապես՝ բառապաշարային օրագրի միջոցով: Քննության են ենթարկվում մեթոդի արդիականության և արդյունավետության գործոնները, ինչպես նաև դրա կիրառման արդյունքում սովորողների ձեռք բերված կարողությունները և հմտությունները:

Դիտարկվում են բառապաշարային փոխներթափանցման համատեքստում նախագծային աշխատանք կատարելու տեսակները, նման աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման ուղիները: Նկարագրվում են «Բառապաշարային օրագիր» նախագծային աշխատանք կատարելու առանձնահատկությունները և անհրաժեշտությունը:

***Հիմնաբառեր՝*** *նախագծային մեթոդ, փոխներթափանցող բառապաշար, բառապաշարային օրագիր, նախագծային աշխատանք, հաղորդակցական ուսուցում*

***Ներածություն***

Արդի փուլում աշակերտների լեզվահաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն օտար լեզվի ուսուցման հայեցակարգային դրույթներից է: Այն ենթադրում է սովորողների բանավոր և գրավոր (բառապաշարային, քերականական և հնչյունաբանական) կարողությունների հավասարաչափ և պարուրաձև համաժամանակյա զարգացում:

Այս համատեքստում կարևորվում է նաև փոխներթափանցող բառապաշարային միավորների ճանաչումը և դրանց ուսուցման առանձնահատկությունների բացահայտումը: Սույնով պայմանավորված՝ հոդվածի նպատակն է մշակել և ուսուցման գործընթացում ներդնել փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական

դժվարությունների բացահայտման, կանխարգելման և հաղթահարման մեթոդական համակարգ, որը կնպաստի դրանց համար արդյունք հանդիսացող լեզվական սխալների նվազմանը և դրանց արդյունավետ հաղթահարմանը:

Նկատենք, որ «փոխներթափանցող բառապաշար» ասվածը ներառում է այն բառային միավորները, որոնք օգտագործելիս սովորողները սխալներ են կատարում, իրենց մայրենի, նախկինում յուրացված այլ լեզուների բացասական ազդեցության, կամ հենց ուսումնասիրվող օտար լեզվի սխալ ընկալման հետևանքով: Հոդվածն արդիական և իր տեսակով հայրենական մեթոդական գրականության մեջ նորույթ է, քանի որ այն ուսումնասիրում է ոչ միայն նման սխալների առաջացման տեսական ասպեկտները, այլև դրանք կանխարգելելու և հաղթահարելու նպատակով մշակված մեթոդական համակարգը՝ ի թիվս նախագծային ուսուցման մեթոդի: Մի մեթոդ, որը թեև մեծ տարածում է գտել ժամանակակից օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում, սակայն փոխներթափանցող բառերի ուսուցման, կանխարգելման և հաղթահարման համատեքստում գրեթե ուսումնասիրված չէ:

Շեշտադրումը կատարում ենք մեթոդի մի շարք տարբերակներից միայն մեկի՝ «Բառապաշարային օրագրի» վրա, որոշ հանգամանքների թելադրանքով, որոնք հանգամանալից քննվում են տվյալ հոդվածի համապատասխան ենթաբաժնում:

***Նախագծային մեթոդը***

Նախագծային մեթոդը ուսուցչի կողմից կազմակերպված և սովորողների կողմից ինքնուրույն իրականացված գործողությունների ամբողջականություն է, որի վերջնարդյունքը մասնակիցների պատրաստած ստեղծագործական աշխատանքն է (Иванова, 2010, с. 16):

Մ. Ռոստովան բնութագրում է որպես «գիտելիքների ամբողջություն, որը սովորողը յուրացնում է գիտակցաբար, հասկանալով դրանց նշանակությունը և անհրաժեշտության դեպքում՝ դրանց կիրառության վայրն ու հնարավոր տարբերակը» (Ростова, 2012, с. 280):

Այն մեկ կամ մի քանի առաջադրանքներից բաղկացած շարք է, որը սովորողները հաջորդաբար կատարում են նախագիծն ամբողջականացնելու և ավարտին հասցնելու նպատակով: Նախագիծը պատրաստվում է որոշակի սահմանված ժամանակահատվածում, որը ներկայացվում է տվյալ նախագծի ուղեցույցում: Նշված մեթոդը մասնագիտական գրականության մեջ անվանվում է «ուսուցման աշակերտակենտրոն մեթոդ»՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացվում է՝ հիմք ընդունելով մասնակիցների հետաքրքրությունները, ճաշակը, պահանջմունքները, կարիքները և ցանկությունները:

Նախագծային մեթոդը կիրառելի է ինչպես փոխներթափանցող բառապաշար, այնպես էլ թևավոր խոսքեր, մասնագիտական կամ որոշակի թեմայի առնչվող բառեր և տարատեսակ բառակապակցություններ ուսուցանելիս:

***Նախագծային մեթոդի տեսակները***

Փոխներթափանցող բառապաշար դասավանդելու համատեքստում նախագծային աշխատանք կատարելու հնարավոր տարբերակներն են՝

- •սահիկաշարը
- •պաստառ-շնորհանդեսը
- •շաբաթվա բառը
- •բառապաշարային օրագիրը
- •փոդքասթ ձայնագրելը
- •տեսանյութ պատրաստելը
- •թռուցիկ պատրաստելը
- •գրպանի բառարանը (Савина и Крапотина, 2018, с. 783-784)

Ըստ իրականացման եղանակի՝ սույն մեթոդը կարող է լինել անհատական, երբ նախագիծն իրականացվում է բացառապես մեկ աշակերտի կողմից, զուգաշխատանք՝ պատրաստված երկու աշակերտի կողից և խմբային՝ երեք և ավել մասնակիցների կողմից:

Նախագծում մասնակիցների ներգրավվածության աստիճանով պայմանավորված՝ տվյալ մեթոդը կարող է լինել երեք տեսակ: Մեթոդական գրականության մեջ վերոհիշյալ տեսակները բնութագրելիս մանկավարժ-մեթոդիստները կիրառում են հետևյալ եզրույթները՝

1. Կառուցվածքային (structured) կամ առաջադրանք-նախագծեր (task projects): Այս տեսակ նախագծերը առաջարկվում են ուսուցչի կողմից, գտնվում են վերջինիս լիակատար հսկողության ներքո և կիրառվում են բացառապես նրա առաջարկած եղանակով: Մասնակիցների ներգրավվածությունը նման նախագծերում բավականին ցածր է, քանի որ այն չափազանց նման է ուսուցման ավանդական տարբերակին:
2. Կիսակառուցվածքային (semi-structured) կամ նեղ մասնագիտական/ կոնկրետ ուղղվածության (discipline projects) նախագծեր: Նման նախագիծ իրականացնելիս ուսուցիչը ներկայացնում է ակնկալվող նախագծի իր մոտավոր պատկերացումը և դրա կատարման համար անհրաժեշտ միջոցները, որոնք սովորողները նախագիծն իրականացնելիս իրավասու են, բայց պարտադրված չեն գործածել: Սովորողներին ընձեռվում է հնարավորություն՝ ինքնուրույն կազմելու դրա իրականացման համար անհրաժեշտ քայլերի հաջորդականությունը և նախընտրելի մեթոդները:
3. Ոչ կառուցվածքային (unstructured) կամ խնդրահեն (problem projects) նախագծեր. սովորողներն ունեն լիակատար ազատություն ընտրելու

նախագծային աշխատանքի տեսակը և այն իրականացնելու համար անհրաժեշտ քայլերի հաջորդականությունը (Prince & Felder, 2006, p. 130):

Փոխներթափանցող բառապաշարային միավորներով նախագծային աշխատանք պատրաստելիս հարկ է ուշադրություն դարձնել դրա իրականացման հետևյալ փուլերին՝

1. փոխներթափանցող բառապաշարային միավորների առանձնացում և խմբավորում,
2. իրականացվող աշխատանքի նախագծում. այս փուլում ընտրվում է նախագծային աշխատանքի թեման, որոշվում է աշխատանքի բովանդակային մասի պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության տեսակը: Ընտրվում են տեղեկատվությունը փնտրելու և գտնելու աղբյուրները (համացանցը, գրքերը, ամսագրերը, պարբերականները և այլ անհրաժեշտ ու հասանելի ռեսուրսները), այն վերլուծելու մեթոդները, խմբերի ձևավորման կարգը և դրա անդամների միջև դերերի բաշխումը,
3. ստացված աղբյուրներից անհրաժեշտ տեղեկատվության վերլուծություն և խմբավորում. այս փուլում սովորողները անհրաժեշտ և նպատակահարմար նյութերն առանձնացնում են ավելորդ և տվյալ ուսումնասիրության շրջանակներում ոչ կիրառելի նյութերից,
4. նախագծի պատրաստում,
5. ավարտուն նախագծի ներկայացում,
6. վերջնարդյունքի գնահատում. անհրաժեշտ է նկատել, որ գնահատումն իրականացվում է՝ շեշտադրելով ձեռք բերված գիտելիքը և հմտությունները, այլ ոչ թե թերությունները և բացթողումները (Kokotsaki, Menzies & Wiggins, 2016, p. 274):

Բառապաշարային փոխներթափանցման ենթարկվող լեզվական միավորները նախագծի տեսքով ներկայացնելու եղանակներն են՝

1. գրավոր. պատրաստի նախագիծը հանձնվում է գրավոր տարբերակով,
2. բանավոր. ավարտուն աշխատանքը ներկայացվում է բանավոր,
3. գրավոր և բանավոր. իրականացված նախագիծը ներկայացվում է բանավոր (քննարկում, փորձի փոխանակում, սահիկաշար), ապա գրավոր (ռեֆերատ, հոդված, ակնարկ, հաշվետվություն) տարբերակով:

«Փոխներթափանցող բառապաշարը» հաղթահարելու նպատակով ձևավորված խմբերը կարող են լինել ֆորմալ և հենակետային: Ֆորմալ կամ կարճաժամկետ խմբերը մեկ դասի ընթացքում հանձնարարված աշխատանքը կատարելու նպատակով ձևավորված խմբերն են, որի գործունեությունը դադարեցվում է դասի վերջում՝ կատարած

աշխատանքը ներկայացնելով և ամփոփելով: Հենակետային կամ երկարաժամկետ են այն խմբերը, որոնք ձևավորված են նախագծային աշխատանքը որոշակի ժամանակահատվածում կատարելու նպատակով: Դրանց գործունեության համար սահմանված ժամանակը պայմանավորված է լինում նախագծի բարդությամբ և իրականացվող աշխատանքի ծավալով:

Պատրաստի նախագծի գնահատումն իրականացվում է երկու տարբերակով՝ ընթացիկ և ամփոփիչ: Առաջին տարբերակի պարագայում ուսուցիչը գնահատում է նախագծի իրականացման ընթացքը, քայլերի կատարման հաջորդականության լիարժեքությունը, մասնակիցների ներգրավվածության ու արդյունավետության աստիճանը և մի շարք այլ բաղադրիչների պատշաճ իրականացումը՝ համաձայն նախագծի ուղեցույցում ներկայացված պահանջների: Ամփոփիչ գնահատման ժամանակ ուսուցիչը գնահատում է միայն վերջնարդյունքը՝ պատրաստի նախագիծը, անտեսելով դրա իրականացմանը նպաստող քայլերի ամբողջականությունը: Պատրաստի նախագիծը կարող է գնահատվել ուսուցչի, համադասարանցիների կամ երրորդ անձի կողմից, ով չի մասնակցել նախագծի իրականացման աշխատանքներին:

Կարելի է կատարել մի քանի գնահատում, նախ՝ աչքի ընկած աշակերտների պարգևատրում, երբ նախագծի բարեհաջող իրականացման համար հավելյալ աշխատանք կատարած աշակերտները արժանանում են հատուկ գովասանքի: Երկրորդը՝ անհատական, որի ընթացքում ուսուցիչը գնահատում է առանձին աշակերտների կողմից իրականացրած աշխատանքը: Երրորդը՝ խմբային գնահատում, երբ ուսուցիչը նշանակում է մեկ ընդհանրական գնահատական՝ նախագիծն իրականացնող բոլոր մասնակիցների համար (Աստվածատրյան, Թերզյան, 2014, էջ 138):

***«Բառապաշարային օրագիր» նախագծի կիրառումը փոխներթափանցող բառերի հաղթահարման գործընթացում*** նախագծային ուսուցման հենակետային տարբերակ է, որում ներկայացվում են բառի բացատրությունը, արտասանությունը, նախադասության մեջ դրա կիրառման տարբերակները և, հնարավորության դեպքում, բառի վիզուալ պատկերը՝ եռայուն ձևաչափով (Rakhmawati, 2016, p. 55; Sari, 2019, p. 2):

Բառապաշարային օրագրի առանձնահատկությունն այն է, որ տվյալ աշխատանքն իրականացնելիս աշակերտների միջև գոյություն ունեցող համագործակցային տարրն ավելի քիչ է, քանի որ հիմնական շեշտադրումը սովորողների անհատական կարողությունների ձևավորման և կատարելագործման վրա է:

Բառապաշարային օրագրի գործածումը փոխներթափանցող լեզվական միավորների ուսուցման գործընթացում նպատակահարմար է մի քանի պատճառով՝

1. զարգացնում է աշակերտների քննական մտածողությունը,
2. նպաստում է բառարաններից օգտվելու կարողության ձևավորմանը,
3. ձևավորում է համատեքստից բառերի իմաստների ընկալման կարողությունը,
4. փոխներթափանցող բառերի հաճախակի կրկնության շնորհիվ դրանք սովորողի ակտիվ բառապաշարի մաս է դարձնում,
5. զանազան մեթոդների կիրառման շնորհիվ փոխներթափանցող բառապաշարի յուրացումը դարձնում է աննկատ, դյուրին, արագ և արդյունավետ,
6. սովորողներին տեսանելի է դառնում իրենց կատարած աշխատանքը և յուրացված գիտելիքի ծավալը,
7. օգնում է ուսուցչին հետևել սովորողների կատարած աշխատանքին և նրանց աճին (Hanifia, 2013, p. 83):

Նախագծային ուսուցման տվյալ տարբերակը ուսումնական պլանում ընդգրկելուց առաջ ցանկալի է պատրաստել դրա նմուշ-օրինակը՝ ակնկալվող աշխատանքի տեսակը սովորողներին հասկանալի և տեսանելի դարձնելու նպատակով: Այնուհետև, անհրաժեշտ է նախապատրաստել այն պարագաները, որոնք կիրառվելու են նախագծի իրականացման ընթացքում՝ տետր, հուշատետր, գունավոր մատիտներ ու գրիչներ, ընդգծող գրիչ և տպված կամ առցանց տիրույթում գտնվող բառարան, որը պետք է սովորողների տրամադրության տակ լինի նախագիծն իրականացնելու ողջ ընթացքում (Nurdini & Marlina, 2018, p. 277):

Կարծում ենք, որ «բառապաշարային օրագիր» նախագծային մեթոդը ցանկալի է կիրառել մասնավորապես հանրակրթական դպրոցի 6-րդ և ցածր դասարանի աշակերտներին փոխներթափանցող բառապաշար ուսուցանելիս: Նշված դասարանի աշակերտների հետ նման նախագծային աշխատանք կատարելը նպատակահարմար է՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, օտար լեզվի իմացության մակարդակը, համակարգչային սահմանափակ կարողությունները, ստեղծագործական և տարբերվող աշխատանք կատարելու մեծ ձգտումը: Նման նախագծային աշխատանք կատարելիս անհրաժեշտ է համապատասխանեցնել սովորողների կարիքները նախագծային աշխատանք կատարելու նպատակներին, որի արդյունքում նրանց մոտ կձևավորվեն և կզարգանան հետևյալ կարողությունները՝

1. բառարաններից օգտվելը, օրինակ՝ գտնել բառի տառադարձության և թարգմանության ճիշտ տարբերակը,
2. գիտակցել և վերլուծել որոշ բառային միավորների յուրացման ընթացքում առաջացող հնարավոր դժվարությունները,
3. փոխներթափանցող բառային միավորների հաղթահարման ուրույն տարբերակի մշակումը,
4. փոխներթափանցող բառերի վիզուալացումը, որը հնարավոր է դարձնում գրավիչ և պատկերավոր եղանակով հիշել առանձնահատուկ բարդություն ներկայացնող լեզվական միավորները:

***Բառապաշարային օրագրի միջոցով փոխներթափանցող բառային միավորների յուրացման քայլերի հաջորդականությունը***

- Յուրաքանչյուր նոր թեմա սկսելուց առաջ ուսուցիչը կատարում է նոր բառանյութի համեմատական վերլուծություն՝ առանձնացնելով բառեր և բառապակապցություններ, որոնք կարող են փոխներթափանցման ենթարկվել:
- Հաջորդող դասերից յուրաքանչյուրի ընթացքում ուսուցիչը աշակերտներին ներկայացնում է դրանցից մեկական օրինակ՝ հանձնարարելով, նախքան մյուս դասը, տվյալ բառի շուրջ որոշակի աշխատանք կատարել՝ դուրս գրել տրված բառի բացատրությունը, թարգմանությունը և տառադարձությունը:
- Դասի ընթացքում աշակերտները ուսուցչի հետ միասին քննարկում են իրենց կատարած աշխատանքը, որից հետո ուսուցչի օգնությամբ ավելացնում են տվյալ բառի հոմանիշները և հականիշները, այլ բառերի հետ համադրման եղանակները, նախադասության մեջ գործածման տարբերակները:
- Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ յուրովի պատկերում է տվյալ բառային միավորն իր բառապաշարային օրագրում:
- Ստացված արդյունքները քննարկվում են ողջ դասարանի կողմից, որից հետո աշակերտները միմյանց ցույց են տալիս կատարած աշխատանքը:

Հաջորդիվ ներկայացնում ենք «բառապաշարային օրագիր» նախագծային աշխատանքի օրինակներ՝ դրանց ավարտուն տեսքի վերաբերյալ պատկերացում ձևավորելու համար: Նմուշները վերցված են Մեսրոպ Մաշտոցի անվան երկարօրյա ուսումնական համալիրում սովորող 5-րդ դասարանի աշակերտների բառապաշարային օրագրերից, որտեղ աշակերտները ներկայացնում են «sympathetic» և «modest» բառերն իրենց բնորոշ յուրօրինակ և առանձնահատուկ եղանակով:

Նկար 1




Նկար 2




***Եզրակացություն***

«Բառապաշարային օրագիր» նախագծային ուսուցման տարբերակի ավարտին աշակերտներից յուրաքանչյուրն իր օրագրում ունենում է նման կերպ գրված և պատկերավոր ձևավորված երկու տասնյակից ավել փոխներթափանցող բառեր և բառակապակցություններ, յուրաքանչյուրը ներկայացված անհատական, տվյալ աշակերտի համար հիշարժան և ուրույն կերպով:

Նկատենք, որ փոխներթափանցման ենթարկվող լեզվական միավորները «բառապաշարային օրագիր» նախագծային մեթոդի միջոցով յուրացնելը մեծ ոգևորությամբ ընդունվում է մասնավորապես հիմնական դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանցիների կողմից: Այն սովորողներին ստեղծագործելու մեծ հնարավորություններ է ընձեռում, զարգացնում է

նրանց քննական, ստեղծարար միտքը, միջառարկայական ու միջմշակութային կապեր հաստատելու ունակությունները, ծագած խնդիրներին լուծումներ գտնելու և պատկերավոր ու հիշարժան եղանակով բառանյութը յուրացնելու կարողությունը:

«Բառապաշարային օրագիր» նախագծային ուսուցման մեթոդը խրախուսում և նպաստում է սովորողների ինքնուրույնության ձևավորմանը, զինում է նրանց արժեքավոր և կիրառելի գիտելիքները տարբերակելու, զանազան իրադրություններն առավել խորքային վերլուծելու և, անհրաժեշտության դեպքում, ձեռք բերած գիտելիքները առաջացած դժվարությունների հաղթահարմանը ծառայեցնելու հմտություններով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ. և այլք., Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում. Ուսում. ձեռնարկ ուսուցիչների համար. Եր., Աստղիկ. 2004, 232 էջ:
2. Բլբուլյան Հ., Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ավագ դպրոցականների հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացում: Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 2(53): - Երևան, Լինգվա, 2020, 300 էջ 238-248:
3. Иванова О. М., Проектное обучение как одна из современных технологий обучения иностранному языку// Вестник Сибирской государственной автомобильно-дорожной академии (15). 2010, с.16-18.
4. Ростова М. Л., Проектная методика в обучении английскому языку в педагогическом вузе//Вестник Кемеровского государственного университета 4(4). 2012, с. 279-282.
5. Савина И. В., Крапотина Т. Г., Роль изучения лексики и фразеологии русского языка в формировании языковой личности школьника: использование метода проектов. Конференциум АСОУ: сборник научных трудов и материалов научно-практических конференций (2). Государственное бюджетное образовательное учреждение высшего образования Московской области Академия социального управления. 2018, с. 780-792.
6. Hanifia F. N., The use of vocabulary journal in enriching students' vocabulary mastery and the students' attitude toward its use. Journal of English and Education 1(1). 2013, p. 81-88.
7. Kokotsaki D., Menzies V. & Wiggins A., Project-based learning: a review of the literature. Improving schools 19(3). 2016, p. 267-277.

8. Nurdini H. & Marlina L., Vocabulary journal as a learning tool for students in learning vocabulary through reading at junior high school. Journal of English Language Teaching 6(1). 2018, p. 272-285.
9. Prince M. J. & Felder R. M., Inductive teaching and learning methods: Definitions, comparisons, and research bases. Journal of engineering education 95(2). 2006, p. 123-138.
10. Rakhmawati D., The influence of vocabulary journal in teaching students' vocabulary mastery. Jurnal Smart 2(1). 2016, p.52-59.
11. Sari F. M., Enhancing student's vocabulary mastery through project-based learning in the EFL classroom. In Proceedings of the 2nd international conference on English language teaching and learning. 2019.

## REFERENCES

1. Astvatsatryan M., T'erzyan G. yev aylk'., Teghekatvakan haghordakts'akan tekhnologianeri kirarrumy hanrakrt'akan dprots'um. Usum. dzerrnark usuts'ich'neri hamar. Yer., Asoghik. 2004, -232 ej. (In Armenian)
2. Blbowlyan H., Naxagc'ayin owsowcman texnologiayi kirar'owmy' avag dprocakanneri haghordakcakan kompetentowt'yan d'evavorman gorc'y'nt'acowm: Banber V. Bryowsovi anvan petakan hamalsarani 2(53): - Erevan, Lingva, 2020, 300 e'j 238-248: (In Armenian)
3. Ivanova O. M., Proyektnoye obucheniye kak odna iz sovremennykh tekhnologiy obucheniya inostrannomu yazyku. Vestnik Sibirskoy gosudarstvennoy avtomobil'no-dorozhnoy akademii (15). 2010, s. 16-18. (in Russian)
4. Rostova M. L., Proyektnaya metodika v obuchenii angliyskomu yazyku v pedagogicheskom vuze. Vestnik Kemerovskogo gosudarstvennogo universiteta 4(4). 2012, s. 279-282. (in Russian)
5. Savina I. V. i Krapotina T. G., Rol' izucheniya leksiki i frazeologii russkogo yazyka v formirovanii yazykovoy lichnosti shkol'nika: ispol'zovaniye metoda proyektov. Konferentsium ASOU: sbornik nauchnykh trudov i materialov nauchno-prakticheskikh konferentsiy (2). Gosudarstvennoye byudzhetnoye obrazovatel'noye uchrezhdeniye vysshego obrazovaniya Moskovskoy oblasti Akademiya sotsial'nogo upravleniya. 2018, s. 780-792. (in Russian)

## АСМИК БИШАРЯН - СПОСОБЫ ПРЕОДОЛЕНИЯ ЛЕКСИЧЕСКОЙ ИНТЕРФЕРЕНЦИИ МЕТОДОМ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ

***Ключевые слова:*** *метод проектного обучения, лексическая интерференция, словарный дневник, проектная работа, коммуникативное обучение*

За последнее десятилетие метод проектного обучения приобрел широкое распространение во всем мире и стал предметом ряда исследований. Данная статья посвящена преодолению лексической интерференции путем применения словарного дневника.

Описаны факторы актуальности и эффективности применяемого метода, а также умения и навыки, приобретаемые студентами в результате его применения.

Рассматриваются виды проектной работы в контексте предотвращения интерферирующих лексических единиц, способы организации и осуществления такой работы, а также ее оценивание.

Представлены особенности и необходимость употребления словарного дневника с целью преодоления лексической интерференции.

**HASMIK BISHARYAN - METHODS OF OVERCOMING LEXICAL INTERFERENCE THROUGH PROJECT-BASED LEARNING**

***Key words:*** *project-based method, lexical interference, vocabulary journal, project work, communicative language teaching*

Over the past decade, the project-based learning method has been immensely used worldwide and has become the subject of several studies. The article is devoted to methods of overcoming lexical interference through project-based learning, namely, through one of its variants which is vocabulary journal.

The factors of necessity and effectiveness of the applied method, as well as the skills and competences acquired by students and the result of its application are considered.

The article discusses the types of projects in the context of preventing lexical interference, ways of organizing and implementing such projects, as well as their assessment.

The features and the necessity of using vocabulary journals to overcome lexical interference are presented.

**Ներկայացվել է՝ 10.04.2023 թ.**
**Գրախոսվել է՝ 16.04.2023 թ.**

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
## INFORMATION ABOUT THE AUTHORS

**ԱԴԱՄՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի ավագ դասախոս

**АДАМЯН ЭВЕЛИНА** - старший преподаватель кафедры физической культуры и гражданской обороны Государственного университета имени В. Брюсова

**ADAMYAN EVELINA** - Senior Lecturer, Chair of Physical Education and Civil Defense, Brusov State University

**ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳՈՌ** - աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչի ժ/պ, ԵՊՀ սերվիսի ամբիոնի դոցենտ

**АЛЕКСАНЯН ГОР** - кандидат географических наук, доцент, и.о. заведующего кафедрой планирования и управления образованием Государственного университета имени В. Брюсова, доцент кафедры сервиса Ереванского государственного университета

**ALEKSANYAN GOR** - Candidate of Sciences (Geography), Associate Professor Acting Chairmen of the Department of Education Management and Planning at Brusov State University, State University, Associate Professor at the Chair of Service of Yerevan State University

**ԱՆՏՈՆՅԱՆ ԼԻԼԻԹ** - հայցորդ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի Ս. Բյուրատի անվան հ.125 հիմնական դպրոցի տնօրեն

**АНТОНЯН ЛИЛИТ** - соискатель, Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, директор основной школы № 125 имени С. Бюрата г. Ереван

**ANTONYAN LILIT** - Ph.D. student, at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, prinicipal of school #125 after Smbat Byurat

**ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵԴԱ** - մանկավարժ-հոգեբան, մանկավարժության մագիստրոս, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի լաբորանտ

**АРАКЕЛЯН СЕДА** - педагог-психолог, магистр педагогики, лаборант кафедры физической культуры и гражданской обороны Государственного университета имени В. Брюсова

**ARAKELYAN SEDA** - Pedagogue-psychologist, Master of Pedagogy, Laboratory assistant, Chair of Physical Education and Civil Defense, Brusov State University

**ԱՍԱՏՐՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ** - դասախոս, օտար լեզուների ամբիոն, Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան

**АСАТРЯН ТАКУИ** - преподаватель кафедры иностранных языков Ереванского государственного медицинского университета им. Мх. Гераци

**ASATRYAN TAGUI** - Lecturer, Chair of Foreign Languages, Yerevan State Medical University after Mh. Heratsi

**ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ** - մանկավարժական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

**АСАТРЯН СУСАННА** - кандидат педагогических наук, доцент кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова

**ASATRYAN SUSANNA** - Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor, Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

**ԱՎԱԳՅԱՆ ԷԼԼԱ** - բանասիրական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Գերմաներենի ամբիոնի դոցենտ

**АВАГЯН ЭЛЛА** - кандидат филологических наук, доцент кафедры немецкого языка Государственного университета имени В. Брюсова

**AVAGYAN ELLA** - Candidate of Sciences (Philology), Associate Professor at the Chair of German, Brusov State University

**ԱՐՇԱԿՅԱՆ ԱՆԱՀԻՏ** - մանկավարժական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
**АРШАКЯН АНАИТ** - кандидат педагогических наук, доцент кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**ARSHAKYAN ANAHIT** - Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor at the Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

**ԲԱՅՏԱԼՅԱՆ ԵԼԵՆԱ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնի ղեկավար
**БАЙТАЛЯН ЕЛЕНА** - соискатель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета им. В. Брюсова, руководитель центра поддержки студентов и сотрудничества выпускников Государственной академии художеств Армении
**BAYTALYAN YELENA** - Ph.D. student at V. Brusov State University, Chair of Pedagogics and Language teaching methodology. Head of Students' Support and Alumni Cooperation Centre, State Academy of Fine Arts of Armenia

**ԲԻՇԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի Օտար լեզուների ամբիոնի դասախոս, Մեսրոպ Մաշտոցի անվան երկարօրյա ուսումնական համալիրի ուսուցիչ
**БИШАРЯН АСМИК** - соискатель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова, преподаватель кафедры иностранных языков международного научно-образовательного центра НАН РА, преподаватель английского языка Учебного комплекса продленного дня имени Месропа Маштоца
**BISHARYAN HASMIK** - Ph.D. student at the Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University, Lecturer at the Department of Foreign Languages- NAS RA International Science Education Center, English Language teacher at Mesrop Mashtots Extended-Day Educational Complex

**ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

**ГАБРИЕЛЯН АННА** - аспирант кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова

**GABRIELYAN ANNA** - Ph.D. student at the Chair of Pedagogy andLanguage Teaching Methodsology, Brusov State University

**ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՆՆԱ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության

**ДАРБИНЯН АННА** - старший преподаватель кафедры физической культуры и гражданской обороны Государственного университета имени В. Брюсова

**DARBINYAN ANNA** - Senior Lecturer, Chair of Physical Education and Civil Defense, Brusov State University

**ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՓԻՆԵ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի կառավարման մագիստրոս, Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության նախարարի տեղակալի օգնական

**ДАРБИНЯН АРПИНЕ** - магистр менеджмента кафедры планирования и управления образованием Государственного университета имени В. Брюсова, помощник заместителя министра Министерства чрезвычайных ситуации Республики Армения

**DARBINYAN ARPINE** - Master of Management at the Chair of Education Management and Planning, Brusov State University, Assistant to the Deputy Minister of the Ministry of Emergency Situations of the Republic of Armenia

**ԴԱՎԹՅԱՆ ՆՈՒՆԵ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի դասախոս, Դասագրքերի և տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի դասագրքերի մասնագետ և մարզային համակարգող

**ДАВТЯН НУНЭ** - преподаватель кафедры планирования и управления образованием Государственного университета имени В. Брюсова, специалист по учебникам и региональный координатор Оборотного фонда учебников и информационно-коммуникационных технологий

**DAVTYAN NUNE** - Lecturer at the Chair of Education Management and Planning, Brusov State Univeristy, Textbook Specialist and Regional Coordinator of Textbook and Information Technology Circular Fund.

**ԴԱՎԹՅԱՆ ՍՄԲԱՏ** - տեխնիկական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, ավագ դասախոս
**ДАВТЯН СМБАТ** - кандидат технических наук, старший преподаватель кафедры сервиса и туризма Государственного университета им. В. Я. Брюсова
**DAVTYAN SMBAT** - Candidate of Technical Sciences, Brusov State University, Chair of Service and Tourism, Senior Lecturer

**ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերենի ամբիոնի վարիչ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
**ЕГИАЗАРЯН ГАЯНЕ** - доктор филологических наук, профессор, зав. кафедрой английского языка Государственного университета имени В. Брюсова
**YEGHIAZARYAN GAYANE** - Doctor of Philology, Professor, Head of Chair of English, Brusov State University

**ԷԹԱՐՅԱՆ ԵԼԵՆԱ** - բանասիրական գիտությունների դոկտոր, Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի Գերմաներեն ամբիոնի դոցենտ
**ЭТАРЯН ЕЛЕНА** - доктор филологических наук, доцент кафедры немецкого языка Государственного университета имени В. Брюсова
**ETARYAN YELENA** - Doctor of Philology, Associate Professor, lecturer at the Chair of German, Brusov State University, Yerevan, Armenia.

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ** - ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի դոցենտ
**АРУТЮНЯН КАРИНЕ** - кандидат физико-математических наук, доцент кафедры планирования и управления образованием Государственного университета имени В. Брюсова

**HARUTYUNYAN KARINE** - Candidate of Sciences (Physics and Mathematics), Associate Professor, Chair of Education Management and Planning, Brusov State University

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԻ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետ, Անգլերենի ամբիոնի դասախոս
**ОГАНЕСЯН АНИ** - начальник управления внешних связей и международного сотрудничества Государственного университета имени В. Брюсова, преподаватель кафедры английского языка
**HOVHANNISYAN ANI** - Head of External Affairs and International Cooperation Department, Lecturer at the Chair of English, Brusov State University

**ՄԱՏԻՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ** - մանկավարժական գիտությունների թեկնածու, Երևանի Վ. Վարդևանյանի անվան հիմն. 173 դպրոցի տնօրեն, ԲՊՀ Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս
**МАТИНЯН НАРИНЕ** - кандидат педагогических наук, директор основной школы № 173 имени В. Вардеваняна г. Ереван, преподаватель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**MATINYAN NARINE** - Candidate of Sciences (Pedagogy), in Pedagogical Sciences, principal of School No. 173 in Yerevan, lecturer at the Department of Pedagogy and Teaching of Foreign Languages, Brusov State University

**ՄԻՆԱՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ** - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կրթական ծրագրերի մշակումների բաժնի ղեկավար, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
**МИНАСЯН РУЗАННА** - руководитель отдела разработки образовательных программ Государственной академии художеств Армении; соискатель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета им. В. Брюсова
**MINASYAN RUZANNA** - Head of the department of Academic Programme Development at State Academy of Fine Arts of Armenia, Ph.D. Student at Chair of Pedagogics and Language Teaching Methodology, Brusov State University,

**ՄՈՍԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ** - Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
**МОСИНЯН ДАВИТ** - кандидат философских наук, доцент, Государственный университет им. В. Я. Брюсова
**MOSINYAN DAVIT** - Candidate of Sciences (Philosophy), Associate Professor, Brusov State University

**ՄՈՒՐԱԴՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ** - դասախոս, հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոն, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
**МУРАДЯН КРИСТИНА** - преподаватель кафедры общественных и гуманитарных наук Государственного института физической культуры и спорта Армении; аспирант кафедры английского языка Государственного университета им. В. Брюсова
**MURADYAN CHRISTINA** - Ph.D. student at the Chair of English, Brusov State University

**ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս
**НИКОГОСЯН АРМИНЕ** - преподаватель кафедры физической культуры и гражданской обороны Государственного университета им. В. Брюсова
**NIKOGHOSYAN ARMINE** - Lecturer at the Chair of Physical Education and Civil Defense, Brusov state university

**ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԻ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ավագ դասախոս
**ШАГИНЯН АНИ** - руководитель центра обеспечения качества, старший преподаватель кафедры управления и планирования образования Государственного университета им. В. Брюсова
**SHAHINYAN ANI** - Head of Quality Assurance Center, Senior Lecturer at Chair on Education Management and Planning, Brusov State University

**ՌՈՒԴԵՆԿՈ ԱԼԼԱ** - դասախոս, օտար լեզուների և գրականության ամբիոն, Եվրասիա միջազգային համալսարան
**РУДЕНКО АЛЛА** - преподаватель кафедры иностранных языков и литературы Международного университета Евразия

**RUDENKO ALLA** - Lecturer, Chair of Foreign Languages and Literature, Eurasia International University

**ՍԻՄՈՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ** - դասախոս, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
**СИМОНЯН НАРИНЕ** - преподаватель кафедры сервиса и туризма Государственного университета им. В. Брюсова
**SIMONYAN NARINE** - Lecturer, Chair of Service and Tourism, Brusov State University,

**ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԵՐԻ** - դասախոս, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
**ВАРДАНЯН МЕРИ** - преподаватель кафедры сервиса и туризма Государственного университета им. В. Брюсова
**VARDANYAN MARY** - Lecturer Chair of Service and Tourism, Brusov State University

**ՍԱՐԳՍՅԱՆ ԻՆՆԱ** - մանկավարժական գիտությունների դոկտոր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Ռուսաց և սլավոնական լեզուների ամբիոնի պրոֆեսոր
**САРКИСЯН ИННА** - доктор педагогических наук, профессор кафедры русского и славянских языков Государственного университета имени В. Брюсова
**SARGSYAN INNA** - Doctor of Pedagogical Sciences, Professor at the Chair of Russian and Slavic Languages, Brusov State University

**ՍՈՂԻԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
**СОГИКЯН ТАТЕВИК** - соискатель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**SOGHIKYAN TATEVIK** - Ph.D. student at the Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

**ՏԱՍԿԱԼՈ ՆԻՆԱ** - մանկավարժական գիտությունների դոկտոր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր

**ТАТКАЛО НИНА** - доктор педагогических наук, профессор кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**TATKALO NINA** - Doctor of Pedagogical Sciences, Professor at the Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

**ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
**ПИЛИПОСЯН МАРИНЕ** - аспирант кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**PILIPOSYAN MARINE** - Ph.D. student atthe Chair of Pedagogy and Language Teaching Methodology, Brusov State University

**ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԷԼԵՆ** - Սոցիալական հարցերի պատասխանատու, ֆրանսերեն դասավանդող, SPFA հայ-ֆրանսիական բարեգործական կազմակերպություն
**ОГАНДЖАНЯН ЭЛЕН** - отв. за социальные вопросы, преподаватель французского языка, Армяно-французская благотворительная организация SPFA
**OHANJANYAN ELEN** - Responsible person for Social Affairs, French Language Teacher, SPFA Armenian - French Charitable Organization

Համակարգչային ձևավորումը՝

*Հասմիկ Փիլավչյանի,*
*Սյուզաննա Ղազարյանի*

Տպաքանակը՝ 100

---

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 60 830 111
Էլ. հասցե՝ bsu.sciencedep@gmail.com
http://www.brusov.am

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 2(63) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ-ի գիտական խորհրդի 2023 թվականի հունիսի 26-ի № 13 նիստի որոշմամբ:

*«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականում տպագրության համար հոդվածներին առաջադրվող պահանջները ներկայացված են ԲՊՀ-ի պաշտոնական կայքում.*
https://brusov.am/hy/journal_list/banber_v_bryusovi_anvan_petakan_hamalsarani